(ՇԱՐ.Ը 10-ՐԴ ԷՋ)

Koulaksizian Hnos. S.A.
FABRICACION DE TEJIDOS
LIMA 3560-(1678)CASEROS
TE. 750-5883/3501/4632

SINTONICE
AUDICION CULTURAL
TEKEYAN
La cultura y el quehacer de la armenidad
Domingos de 10,5 a 11 horas.
CX. 10 Radio Continente (Uruguay)
(735 khz. al lado de Radio Mitre)

1918-ի Մայիսի 28-ը... (ՇԱՐ. Թ-ՐԴ ԷՋԷՆ)

Ինչպէս ժամանակին խորհրդահայ պատմագրութիւնը հրաժարուեց Մայիսեան հերոսամարտերի մասին տասնամեակներ չարունակ պրոպագանդուող կեղծ, հակագիտական տեսակէտներից, այնպէս էլ այժմ պէտք է մերժի հայոց պետականութեան մասին ցայսօր յարատեւող դոգմաները եւ ստերէոտիպերը։ Այդ է պահանջում պատմական ճշմարտութիւնը, այդ են պահանջում հայ ժողովրդի ազգային շահերը։

Վերածնուած հայոց պետականութիւնը կազմեց Հայաստանի առաջին Օրէնսդիր մարմինը՝ Հայաստանի Խորհուրդ անունով, ստեղծեց կառավարութիւն՝ համապատասխան նախարարութիւններ։ Հայաստանի Հանրապետութիւնն ունէր տասը հազարնոց բանակ, պետական դրօշակ եւ զինանշան։ Հայաստանի հանրապետութիւնը իր դիւանագիտական ներկայացուցիչներն ունէր Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Պարսկաստանում, Վրաստանում, Ատրպէյճանում եւ այլուր։

Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը 1920 թ. Յուլիսի 28ին Բ. Լեգրանին նշանակում է Հայաստանում ՌԽՖՍՀ լիազօր ներկայացուցիչ։ Վ. Ի. Լենինի ստորագրութեամբ Լեգրանին տրուած մանդատում ասուած է. ՌԽՖՍՀ քաղաքացի Բ. Վ. Լեգրանը ՌԽՖՍՀ կողմից լիազօրւում է զինադադարի եւ հաշտութեան բանակցութիւններ վարելու հայկական հանրապետութեան կառավարութեան հետ։ Բ. Լեգրանը լիազօրուած է վերոյիշեալ պետութեան հետ պայմանագիր կնքելու ինչպէս զինադադարի, այնպէս էլ հաշտութեան վերաբերեալ (Բանբեր Հայաստանի Արխիւների, 1967, Նո.3, էջ 32)։

Անհատի պաշտամունքի տարիներին, ոտնակոխ անելով գիտութեան տարրական սկզբունքները, խորհրդահայ պատմագիտութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը հանել էր պատմութեան էջերից։ Խորհրդահայ պատմաբանները տասնամեակներ չարունակ փորձում էին ապացուցել, որ 1918–1920թթ. Հայաստանում հայկական պետականութիւն գոյութիւն չի ունեցել։

Վերածնուած հայ պետականութիւնը, բնականաբար, պէտք է ստեղծէր իր պետական դրօշը։ 1918 թ. Յուլիսի վերջերին հայոց խորհուրդը՝ լսելով անուանի հայագէտ Ստեփան Մալխասեանի զեկուցումը հայկական դրօշակի մասին, մանրամասն քննարկելով դրօշակի ձեւի եւ գոյների հետ առնչուած հարցերը, ի նկատի ունենալով հայոց պատմական դրօշակները, հաստատեց Հայաստանի պետական դրօշակը՝ հորիզոնական կարմիր, կապոյտ ու նարնջի գոյներով։ Դրօշակի վերջնական հաստատումը պէտք է կատարուէր սահմանադիր ժողովի կողմից, որը պէտք է գումարուէր Հայաստանի երկու հատուածների միացումից յետոյ (Հ. Ստեփանեան, Նշուած աշխատութիւնը, էջ 47)։

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՀԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՒՆԷՐ 47 ՊԱՏԳԱՄԱՒՈՐ, ՈՐՈՆՑԻՑ 18-Ը ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԷԻՆ... ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԱԿԸ ՄԻԱՁԱՅՆ ԸՆԴՈՒՆՈՒԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՄԲ»

Այսօր շատերին է հետաքրքրում այն հարցը, թէ վերածնուած հայ պետականութեան Եռագոյն դրօշակը ունեցե՞լ է, արդեօք, գաղափարական որեւէ երանգ եւ պատմական ակունք։ Ս. Վրացեանը՝ Հայաստանի Հանրապետութեան վերջին վարչապետը, այդ մասին գրել է. «Ի՞նչ բովանդակութիւն կամ խորհուրդ էր դրւում այդ գոյների կամ դրօշակի ամբողջութեան մէջ։ Առանձին պատգամաւորներ իրենց մտքում ունէին, անշուշտ, որոշ բացատրութիւն, ոմանք ճառով էլ արտայայտեցին, բայց հայ խորհուրդը այդ մասին որեւէ որոշում չտուեց, եւ դրօշակն իր ամբողջութեան մէջ, գոյների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շատ արդիւնք էր քուէարկութեան պատահականութեան։ Պատգամաւորների մի մասի կողմից մասնաւոր առարկութիւն էր լսւում -գլխաւորապէս գործնական տեսակէտից - Նարնջագոյնի դէմ- Հայաստանում դժուար էր այդ գոյնի կտոր գտնել։ Առարկում էին փոխարէնը դնել կանաչ գոյն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գոյներից մէկն է։ Բայց նարնջի գոյնը առանձնապէս պաշտպանում էր քաջազնունին (Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետը-Լ.Խ.), որը ղեկավարում էր սոսկ գեղասիրական նկատառումներով, կարմիրի, կապոյտի եւ նարնջագոյնի ներդաշնակցութիւնը դիւր էր գալիս նրա ճաշակին։ (Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 183)։ Եթէ Հայաստանի Խորհուրդը դրօշակի գոյները ընտրելիս դրանց մէջ կուսակցական, գաղափարական, ուղղուածութիւն չէր դնում ապա ինչպէս գրում է Ս. Վրացեանը՝ կային, սակայն, հայկական եռագոյնի մէջ եւ գաղափար ու խորհուրդ դնողներ։ Այդ գոյները, կարծես, բխում էին մեր կեանքից, խորհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան։ Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր, կապոյտը՝՝ Հայաստանի կապոյտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գոյնը՝ խտացումը աշխատանքի։ Հայ ժողովուրդը, որ արիւնով է ձեռք բերել իր ազատութիւնը, հայրենի կապոյտ երկնքի տակ, իր համբաւաւոր աշխատասիրութեամբ՝ պիտի վերաշինէր երկիրը եւ ապրէր ազատ ու երջանիկ (Նոյն տեղում)։

Ինչպէս տեսնում ենք, որոշ գործիչներ, եթէ անգամ հայկական դրօշակի գոյների մէջ ինչ-որ խորհուրդ դրել են, ապա դա ոչ մի կերպ չի առնչուել Դաշնակցութիւն Կուսակցութեան գաղափարախօսութեան հետ։ Ահա այդ է պատճառը, որ խորհուրդի կազմում գտնուող բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները Եռագոյն դրօշակը միաձայն ընդունեցին որպէս հայ պետականութեան խորհրդանիշ։ Հանրապետութեան ստեղծման պահին Հայաստանի Խորհուրդը ունէր 47 պատգամաւոր, որոնցից 18ը Դաշնակցութիւն Կուսակցութեան անդամ էին։ Խորհրդում վեցական տեղ ունէին հայ ժողովրդական, Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցութիւնները, մէկ տեղ՝ Բոլշեւիկները։ Երկու պատգամաւոր անկուսակցական էին։ Ատրպէյճանական Ազգային Խորհուրդը՝ մէկ ներկայացուցիչ, մէկ ներկայացուցիչ եզդիկները։ Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Եռագոյն դրօշակը միաձայն ընդունուել է Հայաստանի բոլոր ժողովուրդների եւ քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների քուէարկութեամբ։

Հայկական պետականութեան վերականգնման եւ Եռագոյն դրօշակի ընդունման կապակցութեամբ Յովհաննէս Թումանեանը գրել է, արդէն իրականութիւն է երեկուայ մեծ երազը, ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչուած ինքնուրոյն հանրապետութիւն նա, իր Եռագոյն դրօշակով կանգնած է միւս պետութիւնների շարքում։

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաեւ այն հանգամանքը, որ Եռագոյն դրօշակը ընդունելուց անմիջապէս յետոյ ողջեգրուեց թէ Հայաստանի եւ թէ սփիւռքի մէջ իբրեւ հարազատ ազգային խորհրդանիշ (Լեւոն Ա. Սարեան, անկախութեան խօսքը. դրօշակ, զինանշան, եւ Հայաստանի Հանրապետութեան դրամական խորհրդանիշը, Հայրենիք, 27 Յուլիսի, 1988)։ 1919 թ. վերջերին, երբ Հայաստանի հանրապետութեան պատուիրակութիւնը ժամանեց Նիւ Եորք, գրում է սփիւռքահայ ճանաչուած պատմաբան Ռիչըրտ Յովհաննիսեան, բոլոր հայ քաղաքական կուսակցութիւնները հաւատարմութիւն երդուեցին Եռագոյնին (Նոյն տեղում)։

Անդրադառնալով Եռագոյնի պատմական ակունքներին, անհրաժեշտ է ընդգծել, որ հայկական դրօշակների պատմութիւնն անբաւարար է ուսումնասիրուած, այդ մարզում գոյութիւն ունեն լուրջ թերութիւններ եւ իրարամերժ տեսակէտներ։ Այդ պատճառով էլ Եռագոյն դրօշակի ակունքների հարցը կարօտ է յետագայ ուսումնասիրութեան։

Անկախ այն հանգամանքից, թէ Հայաստանի հանրապետութեան Եռագոյն դրօշակը պատմական ակունքներ ունեցել է, թէ ոչ, նա պատմութեան մէջ մտել է որպէս հայ վերածնուած պետականութեան ազգային խորհրդանիշ եւ դրանով իսկ իր յաւերժական գոյութեան իրաւունքն է նուաճել հայ ժողովրդի կեանքում։

Ամբողջ հայ ժողովուրդը, հայ ազգային, քաղաքական եւ կրօնական բոլոր ուժերը, ողջ մտաւորականութիւնը ողջունել են հայ պետականութեան եւ նրա Եռագոյն դրօշի ստեղծումը որպէս հայ ժողովրդի 600 տարի առաջ կորցրած պետականութեան վերածննդի, որպէս հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեծ յաղթանակի։

Սփիւռքահայ ճանաչուած գործիչ, Ռամկավար-Ազատական Կուսակցութեան անդամ Հրաչ Երուանդ, խօսելով Եռագոյն դրօշակի մասին, արդարացիօրէն գրել է. «Ո՞վ էր այն հայը, որ պիտի նախատէր պատմութեան յանձնուած դրօշակ մը, այդ դրօշակը ըլլայ Բագրատունիներու շրջանը խորհրդանշող՝ թէ աւելի ժամանակակից շրջան մը, երբ մարդ գիտէ, թէ անոր ետեւէն քալող բանակ եղած է եւ եթէ դասալքութիւն կամ պարտութիւն տեղի ունեցած է, գոյութիւն ունեցած են նոյն ատեն անոր տակ հայրենիքին համար անձնուիրօրէն կռուողներ եւ մեռնողներ, եւ եթէ մարդիկ լացած են, ունեցած են յուզումի եւ ուրախութեան պահեր ալ» («ԱՊԱԳԱՅ», 28 Մայիսի, 1932»)։

«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՕՐԱԿԱՐԳԻ ՄՏՑՐԻՆ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԱԿԸ ՈՐՊԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ»

Այսպիսով, 1918–1920 թթ. հայ պետականութիւնը եւ նրա Եռագոյն դրօշակը պատկանում են ամբողջ հայ ժողովրդին, նրա բոլոր դասակարգերին եւ կուսակցութիւններին։ Հայ ժողովրդի եւ Եռագոյն դրօշակի ճակատագրերը կապուած են միմեանց։ Եռագոյն դրօշակը հայ պետականութեան յաւերժ հերոսական պայքարի եւ անհաշիւ զոհերի գնով ձեռք բերուած պետականութիւնը եւ նրա Եռագոյն դրօշակը չի կարելի անջատել ժողովրդից, յանձնել միայն Դաշնակցութիւն Կուսակցութեան։

Պատմական իրադարձութիւնների եւ ազգային արժէքների նկատմամբ եղած քարացած դոգմաներից եւ հին մտածողութեան ստերէոտիպերից հրաժարուելու պրոցեսը պէտք է ընդհանուր լինի աշխարհասփիւռ հայ ժողովրդի բոլոր հատուածների համար։

Յաւերժ գոյատեւելու համար հայ ժողովուրդը պէտք է հենուի ազգային մնայուն արժէքների եւ պատմական կռուանների վրայ։ Ահա թէ ինչու, երբ խօսք է գնում պատմական արժէքները ճշմարիտ, գիտական դիրքերից վերագնահատելու, հայ ժողովրդի պատմութեան ըսպիտակ բծերը վերացնելու մասին, տարբեր հատուածների բաժանուած, աշխարհում սփռուած հայ ազգային, կրօնական եւ քաղաքական կազմակերպութիւնները պէտք է հանդէս բերեն անաչառ, լայնախոհ վերաբերմունք եւ ժողովրդի առաջ ծառացած պրոբլեմները չըլուծեն առօրեայ պայքարի խնդիրների տեսանկիւնից։

Վերակառուցման քաղաքականութիւնը եւ նրանով պայմանաւորուած համաժողովրդական ղարաբաղեան

(ՇԱՐ.Ը 11-ՐԴ ԷՋ)

Daniel Youssefian e Hijos
S.A.
Distribuidor y Mayorista Textil
Blanco y Tejidos en general
Sarmiento 2357 Buenos Aires
TE. 48-9442/5298

1918-ի Մայիսի 28-ը...

(ՇԱՐ. 10-ՐԴ ԷՋԷՆ)

շարժումը օրակարգի մէջ մտցրին հայ ժողովրդին յուզող կարեւորագոյն պրոբլեմներից մէկը՝ հայ պետականութեան վերականգնման օրը ճանաչելու եւ եռագոյն դրօշակը որպէս ազգային խորհրդանիշ համարելու հարցը:

ՍՍՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահութիւնը, ելնելով վերը շարադրուած պատմական իրողութիւնից եւ ընդառաջ գնալով ժողովրդի ցանկութիւններին Մայիսի 26ին հրամանագիր է ընդունել 1918 Թուականի Մայիսի 28ը Հայկական Պետականութեան վերականգնման օր ճանաչելու մասին, որում ասւում է «1. 1918 Թուականի Մայիսի 28ը ճանաչել Հայկական պետականութեան վերականգնման օր: 2. Եռագոյն (Կարմիր-Կապոյտ-Նարնջագոյն) դրօշը համարել Հայկական ազգային խորհրդանիշ»

Այդ հրամանագիրը արտայայտում է հայ ժողովրդի ցանկութիւնը եւ պատմականօրէն լիովին հիմնաւորած է:

Միանգամայն ճիշդ կը լինի Երեւանի հրապարակներից մէկում կանգնեցնել անկախութեան յուշարձան, որը նշանաւորի դեռեւս մեր թուականութիւնից առաջ կեանքի կոչուած, մինչեւ 14րդ դարը գոյատեւած հայոց պետականութիւնը եւ նրա վերականգնումը 1918 Թուականի Մայիսի 28ին:

Արարատի վրայ գտնուած է Նոյի Տապանը



Երկար տարիներէ ի վեր հնախոյզներ կը խուզարկէին Արարատը, գտնելու համար Նոյի Տապանին հետքերը: Վերջապէս հնախոյզներ գըտած են Տապանին բեկորները, զորոնք հնաքննիչ մեքենային ենթարկելով, փաստած են ճշգրիտ հնութեան տարիքը եւ լայնութեան չափերը, դարձեալ համապատասխան Մեծ Գրքին: Յիշեալ կտորները այժմ կը գտնուին Ֆրանսա, իբր ապացոյց բոլոր մարդկութեան:

Այս գիւտը կը խօսի նաեւ Հայ ժողովուրդին ծագումին հնութեան մասին, երբ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Նոյ, իր գերդաստանով իջած է Տապանէն եւ ապրած Արարատեան դաշտը: Հոն տնկած է այգիներ եւ շէնցուցած, իր բոլոր կարելիութիւններով: Տարիներ վերջ, ան իր անդրանիկ որդին Սեմ-լտող-ը ղրկած է Միջին Արեւելք, որ հոն շէնցնէ, Քամ-թուխ-ը ղրկած է Ափրիկէ, իսկ Յաբեթըմիշտ յաղթական- պահած է իր քով, որուն սերունդը ցարդ կ'ապրի Արարատեան երկրին մէջ...: Պատմութիւնը կը վկայէ, թէ Յաբեթեան, Աշքանազեան, Թորգոմեան, Արմէնեան եւ Հայկեան ժողովուրդը, հակառակ Բաբելական, Յունական, Հռովմէական եւ Օսմանեան ներխուժումներու, հազարամեակներէ ի վեր, ապրած է հոն, առանց տեղափոխութեան...: Յիշեալ ներխուժողները փոխած են հայ գիրը եւ պարտադրած, որ խօսին իրենց լեզուով, բայց անոնք, ժամանակի բերումով, հեռացած են Արարատի Երկրէն եւ Հայը պահած է իր գիրը -լեզուն եւ մշակոյթը: Այս բոլորը կը փաստեն Սեւան լիճին յատակը թաղուող Իշթիկունի (մարդը թիկունք ունի) քաղաքին մէջ, 3500 տարի առաջ, կատարուած բժշկական բարդ գործողութիւնները, որուն մասին «Էրեբունի»ի 29 Ապրիլ թիւով, տուած էինք յօդուած մը, որ կը պատկանէր մեր «Ազգապահպանում» ձեռագրին Գ. Գլխուն:

Դարձեալ, վերջիշեալ նախնիկով տրուած Ա. դարու հնութիւն մը, որ գտնըւած է Ջիլվահ -ամէն ինկած- այժմ Մեծամօր բլուրին վրայ: Թոնթրակեցի գիտնականները, խոշոր ժայռի մը վրայ փորագրած էին աշխարհի կիսագունդը, բարձրութեան եւ լայնութեան գիծերով, իսկ լուսանցքին վրայ զետեղած երկրի լուսնէն ունեցած հեռաւորութիւնը, որ զարմանքով յիշենք, թէ ներկայ լուսնագնացներու գործածած տարազը յար նման է անոր...:

Դարձեալ, Հայաստանի մէջ գտնուած են մետաղահալոց օճախներ, ուր ձեռք բերած են խառնուրդ մետաղներու կտորներ, որոնք կը յիշեցնեն ներկայի կարգ մը խառնուրդ Յուշաժաներ...:

Դարձեալ, Անիի աւերակներուն մէջ գտնուած է կլոր աւազան մը, որուն յատակէն դուրս կ'ելլէին անձանց մետաղէ խողովակներ: Յատակը եւ պատերը կը կրէին ծեփ մը, գորշ գոյնով, զորոնք տարրալուծելէ վերջ, եզրակացուցած էին թէ կաթի թանձրացումներ էին անոնք: Բոլոր կաթերը կը լեցուէին հոն, ուրկէ խողովակներով կը բաժնուէին տուները, ինչպէս ջուրը...:

Այս գիւտերու շարքը չերկարելու համար, դառնանք մեր բուն նիւթին: Նոյի մահուընէ վերջ, Յաբեթ, իր կարգին, անդրանիկ որդին Թարի -ուժ կեանքի-ն ղրկեց Փոքր Ասիա - Այժմու Յունաստան -ուր կառոյց, իր անունով Թրակիա քաղաքը, որ ցարդ կը պահէ իր անունը: Ան, իր Բ. որդին Մոսոքը ղրկեց Սեւ Ծովու հիւսիսը, զոր շէնցուց եւ բազմացաւ իր ժողովուրդը, որ ապագային պիտի կոչուէր Մոսկու - Մոսկուա-:

Վերոյիշեալ Նոյեան Տապանին գիւտով, գիտութիւնը կը բանայ նոր էջ մը, ուր կը ծնի, առաջին հերթով, Հայ ժողովուրդին ծագման հնութիւնը, լեզուն, մշակոյթը եւ քաղաքակրթութիւնը: Ուրեմն, պէտք չէ զարմանանք, երբ Աբրահամ եւ Արտեմ Ալիխանեան եղբայրները գիւտն ըրին Տիեզերական ճառագայթին, Վիքթոր Համբարձումեան Բիւրականի Աստղադիտարանէն տեսաւ Ծիրն Կաթինը իբր Աստղաշինարան: Այս Արարչագործ երիտասարդ աստղերը կը ղրկուին այն ծերացած աստղերուն խոռոչներուն մէջ, որոնք կը նորոգուին եւ կը շարունակեն իրենց կեանքն ու թաւալումը՝ ի գին տիեզերքի յաւերժութեան...: Վիքթոր Համբարձումեան, Միջազգային Աստղաբաշխական կաճառին կողմէ կոչուած է Պատուոյ Նախագահ, զոր կը վարէ այժմ ձեռնահասօրէն...:

Հայ ժողովուրդը շատ բան ունի - անցեալովն ու ներկայով - պարծենալիք, մանաւանդ այս Օտար Ափերուն մէջ, ուր Ճերմակ Ջարդը կը սպառնայ ձուլելու, կլլելու շատ դիւրին կերպով...:

Ծանօթանալով այս բոլոր իրողութիւններուն, իբր Հայ, լաւ խորհինք եւ գանք այն եզրակացութեան, թէ մեր Հին եւ Նոր սերունդին «միացեալ ճակատ»ը միայն կրնայ յաղթահարել, ճողոպրելու համար այս ահազանգող վտանգէն, որ չբանադրուինք մեզ յաջորդող սերունդներէն...:

Յ.Մ.

«ԷՐԵԲՈՒՆԻ»

EL LIBRO DE LA COCINA ARMENIA
Las mejores Recetas Armenias
en Comidas y Repostería
En venta: Niceto Vega 4779
771-2520

Confitería "Armenia"
PRODUCTOS ORIENTALES
TE. 71-4571 Scalabrini Ortiz (ex Cánning) 1317

PROFESIONALES
MEDICOS
Dra. Azaduhi Libertad Telecemian de Anger
Médica - Psicoanalista
Miembro adherente de la Asociación Psicoanalística Internacional
Tratamiento de Familias, Parejas, Adolescentes y Adultos.
Bilinghurst 1663 P.B. D TE. 826-9267 91-8332

ESCRIBANO
GREGORIO HAIRABEDIAN
ESCRIBANO
Av. Roque S. Peña 570 331-5761 34-1579

REPUESTOS Y ACCESORIOS
— PEUGEOT —
TATEOSSIAN Hnos. S.A.
IMPORTACION - EXPORTACION
FABRICACION
BUJIAS EYQUEM
CABELLO 3363/65 T.E.: 801-3952/8959
1425 BUENOS AIRES - REP. ARGENTINA 801-3957/6634

TERKA
S.A.C.I.F.I. y A.
Fábrica de tejidos
Fábrica:
Av. Dr. Arturo Illia 2740 - (1754) San Justo Bs. As.
TE. 651-1651/0634
Administración y ventas:
Moreno 1235 (1091) Cap. TE. 37-3829/6102

Արտագաղթ

ԳԵՈՐԳ ԴԵՒՐԻԿԵԱՆ

Ինձ պատմում էին այս մասին, իսկ ես ցաւով մտածում էի, թէ որքան խաբած է այդ երիտասարդը, որ վերցրած նորածին ու երեքամեայ երեխաներին, գնում էր քեռու մօտ, չատ հասատացած լինելով, թէ այդ երեխաները իսկական հարստութիւնը նրա համար է, որ ինքը տարին երկու անգամ տուրիստ գայ Երեւան՝ զոքանչին տեսութեան։ Մինչդեռ ծերունի ուսուցիչ որդին չի գալիս ծերացած հօրը տեսութեան, ինչ է, թէ նախ չանի։ Շատ յաճախ որքա՜ն դիւրահաւատ են գնացողները եւ յետոյ որքա՜ն մեծ ողբերգութիւն են ապրում դաժան ճշմարտութեան հետ դիմ-յանդիման մնալով։ Եւ երբեմն ինչքա՜ն միամիտ տատրուակներ են մէջտեղ բերում իրենց գնալն արդարացնելու համար։

Ընկերներից մէկը մի այլ ընտանիքի մասին պատմեց, որը գնում էր, թէեւ ոչնչից դժգոհելու առիթ չունէր։ Ու երբ հարցրել էին գնացող երիտասարդին, թէ որն է պատճառը, պատասխանել էր, թէ մայրը չի կարողանում առանց Ամերիկայում դառնուղ եղբօր ապրել։ Իսկ հարցնողը լաւ գիտէր, թէ չատ երկար ժամանակ մօր ու որդու յարաբերութիւնները խոով լինելու աստիճանի վտա էին եղել, բայց յանկարծ չահերի միասնութիւն էր ստացուել, եւ որդին չահարկելով մօրը կարօտը, կնոջն ու երկու երեխաներին վերցրած գնում էր։ Եւ կինն էլ չատ ախտում էր, որ ժամանակը չի ներել երեխաների հետ աւելի լաւ անգլերէն պարապելու համար։ Ու երբ ծանօթս նրան հարցրել էր, մի՞թէ ինքը չի կարող ազդել ամուսնու վրայ եւ չգնալ, նա դարմացել էր. ‘չէ՞ որ ինքը կին է։ ինչպէ՞ս կարող է ընդդէմ գնալ ամուսնու կամքին։ Իսկ երբ նրան բացատրել էին (իբր չգիտէր), թէ բոլոր օրէնքներով երեխաները մօրն են պատկանում եւ եթէ ինքը չցանկանայ գնալ, երեխաներին ամուսինը չի կարող տանել, նա չատ հանգիստ պատասխանել էր։

– Իսկ եթէ մենա՞կ գնայ։

Իսկ ընկերս ասել էր։

– Եթէ ձեզ թողնել-գնալու է, այդ ամուսնու հետ չարժէ ապրել ոչ այստեղ եւ ոչ էլ՝ Ամերիկայում։

Նա լռել էր, քանի որ պարզուել էր, թէ ինքն էլ ամուսնուց պակաս չի ցանկանում գնալ։

Այդպէս է, մինչդեռ հենց մայրերն աւելի սթափ պէտք է լինեն եւ իրենց զաւակների ապագայի հանդէպ առաւել մտահոգ։ Նրանք չատ մեծ դեր ունեն արտագաղթը կանխելու ազգօգուտ եւ կարեւոր գործում։

Գնացողների մեծ մասը յաճախ չատ յուզիչ խօսքեր է ասում հայրենասիրութեան մասին, ցանկանում հաւատացնել, թէ իրենք այնտեղ հայ են մնալու, երեխաների հետ հայերէն են խօսելու, սիրելու են Հայաստանը եւ յաճախ ամաչում ես հարցնել, այդ դէպքում էլ ինչո՞ւ են գնում, մի՞թէ հեռակայ հայրենասիրութիւն խաղալու համար միայն։

Ահա թէ ինչու մի զրոյցի ժամանակ ընկերներից մէկն ասաց։

– Թող գնան, բայց երկու երգ չերգեն միայն. «Քուռնկը» եւ «Ա՛խ իմ հայրենիքի ջուրը»։

Ոչ։ Երգերի վրայ արգելք դնելով հարցը չի լուծուում։ Արգելք էլ չդրուի մէկ էլ, հազիւ թէ երգեն, հազիւ թէ ժամանակ գտնեն։ Այդ մենք պէտք է ժամանակ գտնենք այս հարցերով առաւել լրջօրէն զբաղուելու, արտաքաղթի պատճառները քննելու, վեր լուծելու, պարզելու համար։ Այդ մասին ոչ նախնիկում, ոչ էլ այժմ ամբողջ ձայնով չենք խօսում, չենք զատապարտում։ Լճացման տարիներին դա պարզ էր, քաղաքական զգօնութիւն էինք խաղում, իբր թէ դա ինչ հարց է որ, եղած-չեղածի քանի հոգի են գնացողները։ Իսկ այժմ ինչո՞ւ ենք լռում, չէ՞ որ քաղաքական զգօնութիւնը հենց այս երեւոյթի դէմն առնելն է, իրական վիճակը պատկերացնելը եւ գնացած ու յետ եկածների դառը փորձը միւսներին բացատրելն է։ Աւատ են, աւելի լաւ է մէկ անգամ տեսնելը, քան տասն անգամ լսելը։

Բայց ինչո՞ւ այսպէս ջրի ճամբայ դարձաւ գնալը։ Եւ գնում են նրանք, որոնք ապահովուած են, թւում է, որեւէ բանից դժգոհելու պատճառ չէին ունենալու։ Ուրեմն, եկէք պատճառները քննենք։ Եթէ ոչ, միայն պանդխտութեան վնասակարութեան մասին կոչ անելով, քիչ բանի կը հասնենք։ Միամիտ չենք, որ այս հարցում միայն կարօտախտի ու հայրենաբաղձութեան վրայ դնենք շեշտը եւ մեր անելիքը արած համարենք։ Բայց եւ չենք կարող չասել, որ մի տեսակ մոդայ է դառնում գնալը, իրար աչք են տալիս, ինչո՞ւ այս մէկը գնաց ու ես դեռ մնում եմ։ Մեծ ու բազմակողմանի աշխատանք է հարկաւոր այս հարցում, եւ մամուլն ու հեռուստատեսութիւնը քիչ դեր չունեն։ Ամէն միջոցով պիտի կռուենք այս ազգավնաս երեւոյթի դէմ՝ յանուն գոնէ գնալ ցանկացողների երեխաների ապագայի։ Մենք լճացման տարիներին չատ ու չատ բան ենք մոռացել մարդկանց հոգեւոր դաստիարակութեան բնագաւառում եւ այսօր քաղում ենք նիւթմոլութեան թունաւոր պտուղները։ Այո, մենք չատ բան մոռացանք այդ տարիներին եւ դրանից առաջ։ Մոռացանք, որ յաճախ մարդու սրտին ու հոգուն ոչինչ չտուող այդ ընդհանուր լոզունգները երբեք չեն փոխարինի իսկական ու ճշմարիտ հայրենասիրութեանը։ Այն հայրենասիրութեանը, որը պէտք է բացառի դաւաճանութիւնը այս հողակտորին։ Այն հողակտորին, որը մեր վերջին զօրավիգն է, եւ նրանից նահանջ լինել չի կարող։ Նախնեաց արեամբ ու հոգով ծանրաչին այս հողից։ Եւ միայն ու միայն նիւթմոլ մտայնութիւնից նիւթմոլ, բխող «Որտեղ հաց, այնտեղ կաց» տիւր «փմաստութիւնը» աղէտաւոր է սաստիկ ուժերեք իրեն չի արդարացրել երբեք եւ ոչ մի ժամանակում։ Մարդ արարածին ոչ միայն կշտանալու հաց է հարկաւոր, այլեւ ազգ-բարեկամ, ընկեր ու հարեւան եւ ամենակարեւորը՝ հայրենի հող։ Եւ դեռ հնուց «Որտեղ հաց, այնտեղ կաց» ասացուածքին ժողովուրդը հակադրել է հայրենի հողի զօրութեան մասին պատմող հայոց Արշակ արքայի եւ պարսից Շապուհ թագաւորի մասին զրոյցը։ Եւ իր առողջ մտայրոյցը։ Եւ իր առողջ մտայրոյցով նուիրեամբ հաւատարիմ է մնացել հայրենի հողի մեծ սրբութեանը։

Գրողական հանդիպումների ընթացքում ինձ յաճախ են հարց տալիս արտագաղթի մասին։ Այո, այսօր արտագաղթի, չվախենանք այդ բառից։

Օրերս ես մի նամակ ընտացայ Զարեհ Սրուանձտեանից՝ Պաւել Զիլինգարեանից։ Ցաւօք, նա չի գրել իր մասնագիտութիւնն ու տարիքը։ Նա ինձ գրել է որպէս ընթերցող՝ «Գոյամարտ» պատմավէպիս առիթով։ Եւ գրքի հարցազրոյցներն առնչել այսօրուայ հետ եւ հիմնականում՝ արտագաղթի։ Նա. սրտի մեծ ցաւով է գրել ամբողջ նամակը։ Ինձ յուզեց այդ անկեղծութիւնը, նամակագրի տագնապն ու խոր մտահոգութիւնը։ Ես ինձ թոյլ եմ տալիս մի փոքրիկ մէջբերում անել այդ նամակից։ «Այսօր ինչքա՜ն ինչքա՜ն հայեր են նորից մոլորուել ու տունդարձ տունթող դարձած, նորից լքում են հայրենիքը։ Ինչպէ՞ս այսպէս եղաւ, ինչո՞ւ կրկնուեցաւ ազգաժողովրդեան բռնեցինք։ Մի՞թէ մեզ պատմութիւնը չեղաւ մեր պատմութիւնը, մեր անմիաբանութիւնը։ Մի՞թէ կայսրերն ու սուլթանները մեզ քիչ սրի քաշեցին եւ մի՞թէ քիչ կորուստներ ունեցանք, որ այսօր նորից պանդուխտի ձեռնափայտը վերցրած՝ օտարի դրան ու հացը հայրենիքից առաւել դասելով, մեր մանուկներին զրկելով մայր հայրենիքից, մեսրոպեան գիր ու գրականութիւնից, տանում են նրանց դէպի ուծացում, դէպի ժխտում»։

Ահա արտագաղթի մասին այսօր սա է ժողովրդական սթափ մտածողութիւնը։ Ամէնը այս ձայնին, որպէսզի չարժանանանք ոչ մեր եւ ոչ էլ մեր չրջապտի երեխաների արհամարհանքին։ Որ ոչ մէկի տան պատին երբեւէ չդրուի «Հաւատամն» օտկալի բառը, ինչպէս դրուել էր տարիներ առաջ։ Եւ մշտապէս լինենք Գորկուն պատկանող իմաստուն խօսքերը. «Երեխաները մեր դատաւորներն են»։

Մեր ճշմարիտ վարքով ու սթափ մտածողութեամբ երբեւէ չարժանանանք նրանց ոչ արհամարհանքին եւ ոչ էլ՝ դատաստանին։ Ցասատ նենք մեր հաւաքական ուժ եւ չխախտենք մեր ազգայի միասնութիւնը։ Զգրկենք մեզ հայրենիք վսեմագոյն բառն արտասանելու իրաւունքից...

WILTON PALACE HOTEL
Av. Callao 1162
Tel. 41-9483
Buenos Aires
Argentina

Lutufyan Hnos. S.A.
Fábrica de pañuelos y toallas
Estamperías
y tintorerías de hilados
Larrea 738
Francia 275
Cap. Fed.
San Martín (Pcia. de Bs. As.)

Silvia Kuyumdjian
Licenciada en
Psicopedagogía y Psicología
Orientación vocacional
para Adolescentes
Av. Libertador 6710 -Piso 23 "A"
786-0846

Doctor
Luis H. Vertanessian
Escribano
Florida 375, 4°
TE. 334-5726/28

Սումկայիթ, խուլիկանութի՞ւն թէ ցեղասպանութիւն

Գրեց· Տոքթ· ՌՈՒԲԷՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Այս հարցադրումը արդէն ի յայտ կը բերէ միջազգային իրաւունքի թերի կողմը։ Եթէ օրէնքը համապարփակ է եւ համատարած, ինչպէս ուրեմն բացատրել միջազգային օրէնքին թոյլտուութիւնը որ որոշ երկիրներ եւ պետութիւններ ընդունին կամ չ'ընդունին որոշ օրինական տրամադրութիւններու գործադրութիւնը իրենց սահմաններէն ներս։ Հոս ալ դարձեալ կը գտնուինք պետութիւններու նախանձախնդրութեան առջեւ՝ թոյլ չտալ որ իր գերիշխանութիւնը ոտնակոխ ըլլայ, թոյլ չտայ որ ինքն իրեն վերապահած իրաւունքներուն մէջ միջամուխ ըլլան արտաքին ոյժերը, միջազգային մարմինները, միջազգային հասարակութիւնը։

Սովետական Միութիւնը ունի օրէնք մը, որդեգրուած 6 Յուլիս 1978, որ կը վերաբերի «միջազգային համաձայնագրերու կնքման, գործադրութեան եւ դադարման»։

19րդ յօդուածը կը տրամադրէ։

«Սովետական Միութեան կողմէ ստորագրուած դաշինքները մանրակրկիտ կերպով կը յարգուին, ըստ միջազգային իրաւունքին»։

Իսկ սահմանադրութեան 20րդ յօդուածը կը յիշէ թէ՝ «Սովետական Միութեան յարաբերութիւնները միւս պետութիւններուն հետ հիմնըւած են միջազգային իրաւունքի կողմէ ընդունուած սկզբունքներու եւ իրաւանորմերու եւ Սովետական Միութեան կողմէ կնքուած միջազգային համաձայնագրերու բարեխիղճ գործադրութեան վրայ»։

Հարկ չենք տեսներ յիշել այն գործնական միջոցները որոնք նախատեսուած են ապահովելու համար միջազգային դաշինքներու «բարեխիղճ գործադրութիւնը», այլ կը բաւէ ըսել, թէ նման գործնական միջոց կը կայանար հրապարակել համապատասխան օրինական միջոցառում մը յորդորելով սովետական դատարաններուն որ մտցնեն ցեղասպանութիւնն ալ իրենց ոճիրներուն ցանկին մէջ՝ իրենց համապատասխան պատիժներով։

Բայց ո՞ր պետութիւնն է որ կ'ընդունի թէ իր հողերուն վրայ գործադրուած է ցեղասպանութիւն։ Այս ոճիրը կը գործադրուի միշտ ուրիշին կողմէ եւ իւրաքանչիւր պետութիւն ինքզինքին իրաւունք կուտայ ամբաստանել ուրիշները, բայց երբեք չի կրնար ընդունիլ, թէ ինքը նման ոճիր մը գործադրած կրնայ ըլլալ։ Մեզի ամենամօտ փաստը Թուրքիան է որ չի դադրիր Պուլկարիան ամբաստանելէ, ուրանալով իր գործած ցեղասպանութիւնները։

Ինչ որ կը վերաբերի Սովետական Միութեան եւ Սումկայիթի պարագային, հաւանաբար անհրաժեշտ ըլլայ ընել հետեւեալ լուսաբանութիւնը։

Ցեղասպանութեան վերաբերեալ 1948ի դաշնագիրը անպայմանօրէն պետութիւններու վրայ չէ որ կը նետէ ոճիրին պատասխանատուութիւնը։ Պատասխանատու կրնան ըլլալ, ինչպէս թուած է այդ դաշնագրի 4րդ յօդուածը, «այն անձերը որոնք ցեղասպանութիւն գործադրած են, ըլլան անոնք ղեկավարներ, պաշտօնեաներ կամ անհատներ»։

Սումկայիթի պարագային բնորոշ է թէ Սովետական կեդրոնական կառավարութիւնը չէ ամբաստանուած ցեղասպանութեամբ։ Ինչ որ կը վերաբերի Ատրպէյճանի կառավարութեան՝ մինչեւ հիմա յայտնի փաստերը անոր մեղսակցութիւնը չեն արծարծեր։ Ուրեմն յանցաւորները, հիմակուհիմա, անհատներ են, ղեկավար կամ պարզ անհատներ։ Եւ զանոնք դատել ու պատժել ցեղասպանութեան ոճիրով՝ ոչինչով կրնայ մրոտել Սովետական Միութեան վարկը։ Ընդհակառակը նախընթաց մը կրնայ ստեղծել նախ հաստատելով թէ Սովետական Միութիւնը իսկապէս «բարեխղճօրէն» կը գործադրէ իր ստորագրած դաշնագրերը, եւ միեւնոյն ատեն ազդարարութիւն մը՝ նման ոճիր մը հետագային գործադրելու մասին մտածողին հանդէպ։

Վերադառնալով այն կէտին թէ ցեղասպանութեան կանխարգելման դաշնագիրը կը նկատուի՞ արդեօք Սովետական Միութեան ներքին օրէնսդրութեան մաս մը թէ ոչ, այս առնչութեամբ, Երեւանի համալսարանի համար պատրաստուած «Միջազգային իրաւունք» գրքին մէջ, 1983, Երեւան, կը կարդանք Ա. Ա. Եսայեանի հետեւեալ խորհրդածութիւնները, էջ 105։

«Միջազգային իրաւունքի ներգործութիւնը ազգային օրէնսդրութեան վրայ կարող է արտայայտուել բազմաթիւ ձեւերով...»։

«Սովետական իրաւունքի մի շարք ճիւղերի հիմունքներում եւ դրանց հիման վրայ ընդունուած օրէնսգրքերում, սահմանուած է, որ այն բոլոր դէպքերում, երբ ՍՍՀՄ Միջազգային պայմանագրերում նախատեսուած կանոնները չեն համընկնում սովետական օրէնքում տեղ գտած կանոններէն, ապա պէտք է կատարուեն միջազգային պայմանագրի կանոնները...»։

Եւ կը շարունակէ մէջբերելով Հայաստանի քաղաքացիական օրէնսգրքի 572րդ յօդուածը.

«Ս. Ս. Հ. Միութեան եւ միութենական հանրապետութիւնների քաղաքացիական օրէնսդրութեան հիմունքները 129րդ յօդուածին համապատասխան, այն դէպքում, երբ միջազգային պայմաններով կամ միջազգային համաձայնագրով, որին մասնակցում է Ս. Ս. Հ. Միութիւնը, սահմանուած են այլ կանոններ, քան սովետական քաղաքացիական օրէնսդրութեան մէջ պարունակուող կանոնները, ապա կիրառւում են միջազգային պայմանագրի կամ միջազգային համաձայնագրի կանոնները»։

Կը թուի թէ յիշեալ յօդուածը, որ միջազգային եւ ներքին օրէնքներու հակասութեան պարագային նախընտրութիւնը եւ գերակայութիւնը կուտայ միջազգային օրէնքին, բաւական պէտք է ըլլար Ցեղասպանութեամբ դատապարտելու համար սումկայիթեան ոճրագործները եթէ սահմանափակուած չըլլար «քաղաքացիական մարզին մէջ եւ ընդգրկէր նաեւ «քրէականը»։

Այնպէս կը թուի թէ սովետական օրէնսդրութեան քրէական ճիւղը դուրս մնացած է այս ընդհանուր սկզբունքի գործնական կիրառումէն։ Սակայն նման թերացում մը չի կրնար արդարանալ, քանի որ Սովետական Միութիւնը ստորագրած է նաեւ 1969ին Վիեննայի մէջ կատարուած «միջազգային պայմանագրերու» վերաբերեալ դաշինքը, որ կը տրամադրէ իր 27րդ յօդուածով.

«Մասնակիցը չի կրնար վկայակոչել իր ներքին իրաւունքի դրոյթը՝ որպէս արդարացում իր կողմէ պայմանագիրը չկատարելու համար»։

Միեւնոյն առնչութեամբ հետաքրքրական է յիշեցնել թէ սովետական իրաւաբանները որքան հետեւողական եղած են՝ երբ հարցը կը դառնար Նիւրէնպէրկեան դատավարութեան կազմակերպումին եւ ֆաշիստներու դատապարտման շուրջ։

Կը կարդանք, օրինակ, իրաւաբանական գիտութիւններու Տոքթ. Վլատիմիր Պուստոգայովի ստորագրութեամբ յօդուածի մը մէջ, թէ ինչպէս «Սովետական իրաւաբանները ծանրակշիռ աւանդ են ներդրել այն սկզբունքների մշակման գործում, որոնք այնուհետեւ հիմք են դարձել միջազգային զինուորական տրիպունալի կանոնադրութեան համար»։ Յօդուածագիրը կը շարունակէ, թուելով մասնաւորաբար Ս. Միութեան Գիտութիւններու Ակադեմիայի թղթակից անդամ, Փրոֆ. Ա. Ն. Տրայնինի մասնակցութիւնը այն աշխատանքներուն, նշելով թէ ինչպէս Ս. Միութիւնը հանդէս է եկած յայտարարութեամբ մը, Հոկտեմբեր 1942ին, որը կը վերջանար պահանջելով որ ֆաշիստական Գերմանիայի պարագլուխներին յանձնել միջազգային տրիպունալ դատին եւ անոնց պատժել քրէական օրէնքի ամենայն խստութեամբ։

Ինչպէս որ գիտենք՝ այն լայն ըմբռնումը, որ կը կոչուի «Մարդկութեան դէմ ոճիր», կ'ընդգրկէ պատերազմական ոճիրները, ֆաշիստական Գերմանիոյ ղեկավարներու ոճիրները եւ նոյնպէս ցեղասպանութիւնը։

Կը կարծեմ թէ, եթէ սովետական իրաւագէտները խղճմտօրէն եւ միայն գիտական մօտեցումով մը քննէին «Սումկայիթի խուլիկանութիւնները» հոն անպայման պիտի գտնէին պատճառներ՝ ըլլալու նոյնքան խստապահանջ՝ Ազերի ոճրագործներուն հանդէպ, որքան ֆաշիստական պարագլուխներուն հանդէպ, եւ պիտի ուզէին որ պատասխանատուները պատժուէին, «քրէական օրէնքի ամենայն խստութեամբ», նոյնիսկ եթէ, հիմակուհիմա, իրաւաբանական թէքնիքի պատճառներով՝ ցեղասպանութիւնը չէ մտած սովետական քրէական իրաւունքի «նամանքլաթուրայէն» մէջ, զանցառում մը որ, բոլոր չափանիշերով, դատապարտելի է եւ կը կարօտի անյապաղ դարմանումի։

ՇԱՐ. ԵՒ ՎԵՐՋ

Colegio Arzruní
UNA NUEVA PROPUESTA
Deliciosas y típicas comidas orientales en el Restaurante de nuestra Institución
Todos los viernes a partir de las 21 hs.
Festeje su cumpleaños - Aniversarios y Despedidas - En un ambiente grato y familiar
Lo esperamos
JOSE MARTI 1562
Comisión de Jóvenes
RESERVAS AL 613-1733

U.G.A.B. U.G.A.B.
12º JUEGOS NAVASARTIAN MUNDIAL
LIGA DE JOVENES
Buenos Aires - Agosto 15 al 20
El evento deportivo mas importante del año
Basquet Masc. y Fem. - Volley Masc. y Fem. - Ping Pong - Tatboi
EE. UU. - Canadá - Francia - Inglaterra - Austria - Suiza - Holanda - Chipre
Líbano - Egipto - Siria - Grecia - Australia - Brasil - Uruguay - Argentina

1691-էն 1894 երկարող ժամանակաշրջանի օսմանեան արխիւները բացուեցան

Մայիս 16-ին, Պոլսոյ Սուլթան Ահմէտի պետական արխիւներու շէնքին մէջ տեղի ունեցած է հաւաքոյթ մը, մասնակցութեամբ բանասէրներու, պատմաբաններու եւ լրագրողներու, ուր պաշտօնապէս յայտարարուած է թէ՝ Օսմանեան արխիւներու մէկ մասը բացուած է: Այս բաժինը կ'ընդգրկէ 1691-էն 1894 երկարող ժամանակաշրջանը:

Խօսք առնողներուն կարգին եղած է նաեւ վարչապետարանի արխիւային հետազօտութեան խորհուրդի մասնագէտ՝ Շինասի Օրէլ, որ օսմանեան արխիւներու մասին ընդհանրական տեղեկութիւններ տալէ ետք, անմիջապէս անցած է Հայկական Հարցին: Ան յայտնած է որ՝ Սեւրի դաշնագիրը կորսնցուցած էր իր իրաւասութիւնը Լոզանի դաշնագրով, խաղաղութիւնը հաստատուած էր երկրին մէջ եւ փոքրամասնութիւններու հարցերը լուծուած էին, Թուրք պետութեան բարեացակամութեան բերմամբ: Սակայն, շարունակած է ան, մեր դիմաց գտնուողները (հայերը) կը շարունակեն իրենց հակառակ դիրքաւորումները:

«Երկար շրջան մենք այս հակառակ դիրքաւորումին դէմ լուռ մնացինք, սակայն, կատարուած քարոզչութիւնները օրէ օր մեզի դէմ ըսկըսան գործել: Եկաւ ժամանակ մը որ այլեւս ստիպուեցանք այս դիրքաւորումին դէմ ճակատ յարդարել... Հայերուն դէմ հարկաւոր պատասխանը տալու համար, որոշեցինք օսմանեան արխիւներու հայերու բաժինը դասաւորել եւ ներկայացնել հետազօտիչներուն» ըսած է Օրէլ:

Այսքան վստահութիւն, թէ արխիւները աներկբայօրէն պիտի փաստեն որ՝ Հայկական Ցեղասպանութիւն տեղի չէ ունեցած եւ հայոց ամբաստանութիւնները այդ ուղղութեամբ իրական արժէքէ զուրկ են, մտածել կուտան արխիւներու «դասաւորման» թրքատիպ եղանակին մասին:

Նախարարական փոփոխութիւններ Հայաստանի մէջ

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի որոշումով, Խորհ. Հայաստանի Արդարադատութեան նախարար ընտրուած է Գարեգին Աչրաֆեան:

Նոր նախարարը ծնած է Գուգարքի Լեռնապատ գիւղը եւ աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի իրաւաբանական ճիւղը: 1970-էն ի վեր անդամակցած է Համայնավար կուսակցութեան, իսկ 1976-ին ընտրուած է Երեւանի քաղաքային Լենինեան շրջանի ժողովրդական դատարանի նախագահ: Վերջին երեք տարիներուն, անդամ եղած է Գերագոյն դատարանի նախագահութեան:

Միեւնոյն ատեն, Գերագոյն Խորհուրդը Հայաստանի Բնակչութեան Սպասարկման Պետական Կոմիտէի նախագահ նշանակած է Գուրգէն Արտաշէսի Ղազախեցեանը:

Երեւանը Լոս Անճելըսի կը կապուի օդային ճամբով

Օդանաւային նոր կազմըուած «Արմէնթէյր» ընկերութեան ձեռնարկութեամբ, Լոս Անճելըս - Երեւան օդային նոր գիծ մը հաստատուած է եւ առաջին օդանաւը վայրէջք կատարած է Զուարթնոցի օդակայանը, Ապրիլի վերջաւորութեան:

Ընկերութիւնը սեփականութիւնն է հրեայ Նէյթըն Սաֆրանի, որուն գործընկեր են նոյնպէս հրեայ՝ Սթենլի Էլփսթին եւ ամերիկահայ Աննա Մութաֆեան: Ընկերութեան կազմութեան մէջ գործօն դեր խաղացած է նաեւ խորհրդային քաղաքացիական թռիչքներու Հայկական Վարչութեան անդամ՝ Ռոպէրթ Սուքիասեան: Ծրագրի իրականացման համար ամերիկեան կողմը եւ Հայաստան 100 հազար տոլար տրամադրած են իւրաքանչիւրը, որպէս հիմնական ֆոնտ: Գոյացած շահը պիտի հաւասարապէս բաժնուի գործընկերներու միջեւ:

Ըստ Սուքիասեանի, «Ընկերութեան առաջիկայ ծրագրերից մէկը Հայաստանում մաքսային օրէնքներից զերծ խանութներ բացելն է, որտեղ կը վաճառուին մեր հանրապետութիւնում մեծ պահանջներ վայելող աշխարհի երկրների ամենատարբեր ապրանքներ. մեր համատեղ հիմնարկութիւնը Մոսկուայի օրինակով, նախատեսել է Երեւանում բացել միջազգային առեւտրական կենտրոն: Որոշել ենք գնել արտասահմանեան արտադրութիւն աւտոմեքենաներ, որոնք վարձոյթով տալու ենք Հայաստան ժամանած արտասահմանցիներին»:

Հետաքրքրական է նաեւ, որ ըստ Սուքիասեանի Խորհ. Միութեան «Արտաքին Գործերի մինիստրութիւնը թոյլատրել է մշտապէս արտասահմանում բնակուող բոլոր խորհրդային քաղաքացիներին հայրենիք գալ ցանկացած ժամանակ, առանց վիզայի եւ մնալ Խորհ. Միութիւնում ինչքան նպատակայարմար են գտնում»:

Կ. Սիմոնեան, Ս. Խանզատեան, Գ. Ստարովոյտովա եւ Ս. Սարգսեան Երեսփոխան ընտրուած Գերագոյն Խորհուրդի լրացուցիչ ընտրութիւններուն

Մայիս 14-ին Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդի լրացուցիչ ընտրութիւնները տեղի ունեցան այն ընտրաշրջաններուն մէջ, ուր կարելի չէր եղած մեծամասնական քուէներով երեսփոխան ընտրել: Հայաստանի պարագային, չորս շրջաններ թափուր կը մնային որոնք են՝ Էջմիածնի թիւ 416, Երեւանի թիւ 393, 394 եւ 734 ընտրական շրջանները: Ըստ հաղորդուած արդիւնքներուն, ընտրուած են գերասան Սօս Սարգսեան, 734 շրջանին մէջ, Կարէն Սիմոնեան, 394 շրջանին մէջ ընդդէմ Սիլվա Կապուտիկեանի, որ ընտրութենէն առաջ քաշած էր իր թեկնածութիւնը, Գալինա Ստարովոյտովա, 393 շրջանին մէջ ընդդէմ Վարդգէս Պետրոսեանի, եւ Սերօ Խանզատեան, թիւ 416 շրջանին մէջ, պարտութեան մատնելով Ռաֆիկ Բաղալեանը:

Մայր Սփիւռք Լիբանան

Ոչ Եւս Է Բժշկապետ Երուանդ Ճիտեճեան



Խոր ցաւով կ'իմանանք գոյժը լիբանանահայ հռչակաւոր բժշկապետ եւ ականաւոր ազգային՝ Փրոֆ. Երուանդ Ճիտեճեանի մահուան, որ պատահեցաւ Պէյրութի մէջ:

Վանեցի համբաւաւոր Ճիտեճեան գերդաստանի զաւակ, հանգուցեալը 1928ին շրջանաւարտ եղած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկական ճիւղէն, յետագային իր մասնագիտութիւնը կատարելագործելով Էտինպուրկ (Սկովտիա), ապա՝ Լոնտոն, արժանանալով բարձր տիտղոսներու՝ վիրաբուժութեան մէջ:

Երկար տարիներ եղած է համբաւաւոր վիրաբոյժը Ամերիկեան Համալսարանի հիւանդանոցին եւ դասախօսը նոյն Համալսարանի բժշկական ճիւղին, «Փրոֆ. աւ Քլինիքըլ Սըրճըրի» տիտղոսով: Վարած է Ամերիկեան Վիրաբոյժներու Համաժողովի Լիբանանի մասնաճիւղին եւ Լիբանանի Քաղցկեղի Ընկերութեան նախագահի բարձր պաշտօնները:

Առ ի գնահատանք լիբանանեան հայրենիքին եւ ընդհանրապէս բժշկութեան մատուցած իր անգնահատելի ծառայութեանց՝ վարձատրուած է բարձր տիտղոսով, ինչպէս՝ լիբանանեան կառավարութեան՝ Ասպետի, Սպայի, եւ Հրամանատարի աստիճաններով Մայրիի Ազգ. Կարգի շքանշանները, ֆրանսական կառավարութեան Պատուոյ Լէգէոնի Ասպետի շքանշան, Յորդանանի Հիւսէյն Թագաւորէն՝ Աստղ կարգի շքանշան, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա. Կաթողիկոսէն՝ Ս. Գր. Լուսաւորիչ շքանշան, եւ Լիբանանի Յոյն-Օրթոտոքս եկեղեցիէն՝ Ս. Մարկոս կարգի հրամանատարի շքանշան:

Հակառակ իր ասպարէզի պայմաններուն, Փրոֆ. Ե. Ճիտեճեան սիրով [illegible] ստանձնած է մեր գաղութի ազգային կեանքին մէջ, եղած է Ս. Նշան Ազգ. Վարժ.ի հոգաբարձու, ատենապետ Ազունիէի Ազգ. Բուժարանի յանձնախումբին, ատենապետ՝ Լիբանանի Թեմի Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովին, եւ ղեկավարներէն՝ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բանագրաւումէն ետք՝ լիբանանահայ համախմբումին:

Իր տիկնոջ՝ լիբանանեան պատմական յուշարձաններու մասնագէտ եւ բազմաթիւ գիրքերու հեղինակ Տիկ. Նինա Նազարէթեան-Ճիտեճեանի հետ ան կարեւոր մասնակցութիւն բերած է միութենական-մշակութային կեանքի մէջ, հովանաւորելով բազմաթիւ ձեռնարկներ եւ փառատօններ:

Տոքթ. Ճիտեճեան, հակառակ իր յառաջացեալ տարիքին, առօրեայ բազմազբաղ վիճակին, ու ընթերցումներուն, լայն ժամանակ կը տրամադրէր մեր մամուլին:

Koulaksizian Hnos. S.A.
FABRICACION DE TEJIDOS
LIMA 3560-(1678)CASEROS
TE. 750-5883/3501/4632

Restaurant
COLBEH MELAHAT
Colbeh
en iraní, significa un pequeño lugar que suma los sentidos: hogar, pequeña casa, nido humilde, recinto acogedor, refugio de la amistad y del amor.
Esta es la COLBEH de MELAHAT
Av. del Libertador 13.041, Martínez
Reservas: 793-3955

Դասախօսութիւն Հ.Բ.Ը. Միութեան մէջ



13 Յունիսի Երեքշաբթի գիշեր Հ.Բ.Ը. Միութեան Մարի Մանուկեանի անուան վարժարանի Ս. Պէնկլեան սրահին մէջ ընտրանի բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ զոյգ դասախօսութիւն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Վիսենթէ Լոբէսի շրջանի Հոգեւոր Հովիւ եւ վարժարանի տնօրէն Տ. Արշամ Աւագ Քհնյ. Պօղոյեան ու Մարի Մանուկեան վարժարանի տեսուչ Փրոֆ. Մարթա Բոժժի: Այս շահեկան դասախօսութեանց խիստ տըպաւորիչ եւ խրախուսիչ էր «Շնորհալի» երգչախումբին ելոյթը, ղեկավարութեամբ Տիկ. Տիանա Սարաֆեանի, որ այլեւս անբաժանելի մասը կը կազմէ մեր հաւաքոյթներուն:

Օր. Մարթա Բոժժին ունկընդիրներու ներկայացնելու պաշտօնը ստանձնած էր Պր. Ռուբէն Քէշիշեանը իսկ Տէր Հայրը՝ Պր. Հրաչ Սուրէնը:

Օր. Մարթա Բոժժի, հմտութեամբ անդրադարձաւ թուրք եւ հայ յարաբերութիւններուն դարաւոր թշնամանքին, եւ տուաւ բացատրութիւններ անոր պատճառներուն, մեծ Եղեռնի ահաւորութեան, հայ ժողովուրդի արժանիքներուն մասին: Որպէս վաղեմի սրտակից, ան լրիւ բացայայտեց իր համակրական զգացումները որպէս անհատ եւ համայնք մեր ազգին հանդէպ:

Տ. Արշամ Պօղոյեանին ելոյթը ուղղակի կը վերաբերէր Սարտարապատի հերոսամարտին: Զայն նկատեց անկիւնադարձ՝ մեր հանրապետութեան հիմնադրութեան մէջ, իբր պատմական համազօր թուական՝ Աւարայրի Ճակատամարտի հետ: Այն ինչ որ ուշագրաւ էր եւ կը կազմէր դասախօսութեան կեդրոնական նպատակը կը կայանար այն ճշմարտութեան մէջ թէ նոր Սարտարապատի մը կրկնութիւնը առկայ էր այսօր եւս, որքան ատեն մեր երկիրը կը գտնըւէր բանթուրանականութեան ահաւոր վտանգին հետ դէմ յանդիման, որքան ատեն իր աշխարհագրական դիրքը զինքը տեղադրած էր արեւելք-արեւմուտք խաչմերուկի մը վրայ: Հրաւիրեց մասնաւորաբար հայրենի հայ անհատը գիտակցելու այս իրավիճակին եւ թելադրեց զգուշաւոր ու պատրաստակամ կեցուածք որեւէ սպառնալիքի մը դիմաց: Այս առթիւ, պախարակելի գտաւ հայ մարդուն ոչխարային համակերպութիւնը եւ զոհուող ըլլալու պատրաստակամութիւնը, ինչ որ պատահեցաւ Սումկայիթի մէջ, ինքնապաշտպանութեան դիմելու միջոցներէն զրկուած, մինչդեռ ոճրագործը կատարելապէս սպառազինուած էր:

Սփիւռքահայութեան կոչ ըրաւ, Հայրենիքի օժանդակութեան մէջ աւելի դրական օգտակարութիւն ունենալ, անոր տալ կարելիութիւնը ինքզինք ոչ միայն գութի արժանի այլ իր ճակատագրին տէրը ըլլալու հըզօրութեամբ օժտուածութեան ինքնաբաւութիւնը: Սփիւռքի հայ ծնողքին թելադրեց իր զաւակը պատրաստել Հայ Դատին ծառայելու, զայն հեռու պահելով թուլանալու եւ ուծանալու վտանգէն, երբ այսօր աւելի քան երբեք պայման էր համախումբ գործել, փլցուցած որեւէ գաղափարախօսական պատուար, որովհետեւ հրամայականը ազգին գոյատեւումն էր եւ ազգին գոյութեան ըսպառնացող վտանգն էր որ կ'անէր հետզհետէ:

SERVICIO DE
RELACIONES HUMANAS
(Sin fines de lucro)
Reserva total
Martes - Jueves - Sábados
15 a 19 Horas
40-4378

Հրաժեշտի երեկոյթ ի պատիւ Ընկ. Գէորգ Մարաշլեանի

Թեմիս Սրբազան Առաջնորդին խօսքերով արտայայտած միանգամայն տխուր եւ ուրախ առիթ մըն էր ի պատիւ Ընկ. Գէորգ Մարաշլեանի սարքուած հրաժեշտի երեկոյթը Երկուշաբթի 19 Յունիսին:

Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնի Սարգիս Պէնկլեան սրահին մէջ հաւաքուած էր, այսօր, հոծ բազմութիւն մը, կազմուած Միութեան վարչականներէն ու զանազան յանձնախումբերու անդամներէն, գաղութիս կազմակերպութիւններու եւ մամլոյ ներկայացուցիչներէ, եւ այլ բարեկամներէ եւ ազգայիններէ. Հոս էին ի մասնաւորի Թեմիս Սրբազան Առաջնորդ Գերշ. Գրիգորիս Եպս. Բունիաթեան, Խ. Միութեան Փոխ-Հիւպատոս Պրն. Յարութիւն Վերմիշեան եւ Միջազգային խաղաղութեան կոմիտէի անդամ Փրոֆ. Լեւոն Մկրտիչեան:

Յետ Պրն. Ռուբէն Քէշիշեանի բացման խօսքին բեմ բարձրացաւ Տիկ. Զեփիւր Գոփուչեան, որ Մարի Մանուկեան Կրթ. Հաստատութեան անունով խօսեցաւ յուզիչ ու պատշաճ բովանդակութեամբ Գէորգ Մարաշլեան տնօրէն, ուսուցիչ, դաստիարակ եւ տիպար հայուն մասին, ապա խօսք առաւ Միութեան Պատուոյ Ատենադպիր Պրն. Գէորգ Քէշիշեան, որուն անպատրաստից, անկեղծ ու սրտառուչ խօսքերը յուզումով համակեցին մթնոլորտը:

Նոյնպէս անպատրաստից, յուզիչ ու հաղորդական էին խօսքերը Հ.Բ.Ը. Միութեան ատենապետ Պրն. Վահրամ Հայրապետեանին, որ վեր առաւ համապարփակ կերպով, Գէորգ Մարաշլեանի բարձր արժանիքները, ընդգծելով կարճ ու պատշաճ պատմականը անոր 12 ամեայ գործունէութեան, խօսելով նաեւ Տիկնոջ Վարդիթերի. ապա Հայրապետեան ամոլին յանձնեց Միութեան նուէրը, որ արուեստագէտ Մանուէլ Ղրտեանի պատրաստած «Այբուբեն» հոյակապ գործն էր:

Սրբազան Առաջնորդը իր կարգին ընդգծեց Ընկ. Գէորգ Մարաշլեանի ղեկավարի առաքինութիւնները, չեշտելով թէ անոր 12 ամեայ ազգային գործունէութեան 8 տարիներուն ընթացքին մօտէն ճանչցած եւ սիրած էր զայն, եզրակացնելով որ եթէ գաղութս զինք կը կորսնցնէ, ապա տարբեր գաղութ մը, Պոսթոն (ԱՄՆ) զայն կը շահի:

Բոլորովին տարբեր էր ոճն ու բովանդակութիւնը Ընկ. Գէորգ Մարաշլեանի արտասանած սրտառուչ խօսքերուն, հրաժեշտի պարզ խօսքեր չէին անոնք, յստակացնելէ ետք որ իր Պուէնոս Այրէսէն մեկնումի միակ պատճառը այն է որ Տէր եւ Տիկ. Մարաշլեաններ վերջացած կը համարեն իրենց ազգային կրթական առաքելութիւնը այս գաղութին մէջ, ուր կը ձգեն իրենց հոգին ու սիրտը, եւ որուն պիտի շարունակեն օգնել հեռուէն. Ընկ. Գէորգ Մարաշլեան ջատագովեց «Սարտարապատ» շաբաթաթերթիս դրական կարեւոր դերը, չեշտելով թէ «որեւէ օժանդակութիւն պէտք չէ զլացուի անոր»:

Գէորգ Մարաշլեան երեկոյթապէս շատ յուզուած էր, ինչպէս էին ներկաները. Բոլորն ալ դէմ էին անոր մեկնումին, բայց այսպէս է կեանքը:

Վարձքդ կատար Ընկ. Գէորգ Մարաշլեան, Տէրը հետդ թող ըլլայ, յաջողութիւն եւ բարօրութիւն քեզի եւ ազնիւ ընտանիքիդ:



Ամուսնութիւն

Յառաջիկայ Շաբաթ օր, 24 Յունիսին, տեղի պիտի ունենայ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ ամուսնութիւնը

Օր. Աննա Կահվեջեանի եւ Պրն. Օհաննէս Տաղտէվիրենի

կնքահայրութեամբ Տէր եւ Տիկ. Խաչատուր եւ Անժել Տաղտէվիրեններու:

Այս ուրախ առիթով, Հարաւ Ամերիկայի Թէքէեան Մշակութային Միութեան Շրջ. Վարչութիւնը, ինչպէս նաեւ «ՍԱՐՏԱՐԱՊԱՏ»ի խմբագրութիւնը լաւագոյն բարեմաղթութիւններ կ'ընեն «ՍԱՐՏԱՐԱՊԱՏ»ի աշխատակից ընկերուհի Աննա Կահվեջեանին –որ զաւակն է թերթիս աշխատակից Պր. Տիգրան Կահվեջեանի–, եւ համայն ընտանիքի պարագաներուն:

Թ.Մ.Մ. - «ՍԱՐՏԱՐԱՊԱՏ»

JORGE KESHISHIAN



AV. SANTA FE 1077 ACASSUSO
100 AUTOS EN STOCK TODAS
LAS MARCAS Y MODELOS
798-9337

Con pedido de publicación

Sr. Director

Periódico Armenio
"SARDARABAD"

Presente

De mi mayor consideración:

Agradezco a Ud. la nota publicada en el número 532 del día 14 del corriente, en la cual creo que debido a la amistad surgida por años de trabajo en la Asociación Cultural Tekeyan, han incurrido en cierto favoritismo hacia mi persona.

Considero un deber aclarar ciertos puntos por respeto a mis compañeros de la Unión del Centro Democrático. En primer término, yo no fui encabezando la lista de concejales sino lo fue el Sr. Pedro González, y, ambos somos los primeros concejales que tiene la UCEDE en la Legislatura de la Ciudad de Avellaneda.

En segundo lugar, quiero resaltar el cargo obtenido por el Sr. José Maldjian quien encabezando la lista de diputados provinciales fue electo para integrar la Legislatura bonaerense.

Agradeciéndole nuevamente la atención hacia mi persona, lo saludo con un abrazo

Sergio Carlos Nahabetian

Hieren a Mons. Keshishian

El Arzobispo Aram Keshishian, Prelado de El Líbano, fue herido por una bala perdida el 15 de mayo.

Mientras Monseñor se encontraba en el patio interior del Catolicosado de Antilias, una bala perdida hizo impacto en su mano, hiriendo sus dedos. Un esporádico tiroteo fue registrado precisamente en esos momentos.

El Prelado fue atendido en un hospital cercano, donde fueron tratadas sus heridas siendo dado de alta el mismo día.

Masco Corp. dona grifos a Artsaj

Taylor (Michigan).- Masco Corp. acaba de donar 2000 grifos marca Delta para las nuevas construcciones de departamentos que se realizan en Stepanakert. Esta donación que totaliza 10.000 libras, fue enviada por avión a Erevan en viaje a Artsaj.

Los nuevos departamentos vienen a subsanar una seria carencia de viviendas creada por el flujo de armenios refugiados desde Azerbaijan el año pasado.

COCINA



Isabel Tchalian

Croquetas de coliflor

PREPARACION:

Deshacer, con ayuda de un tenedor, los ramitos de una coliflor recién hervida. Mezclarlos con un poco de salsa blanca caliente. Unir con dos yemas de huevo y un poco de harina -si fuera necesario- para formar una pasta suave.

Dejar enfriar y luego armar las croquetas, pasarlas por huevo batido y por pan rallado. Freirlas, escurrirlas bien y presentarlas como guarnición de aves asadas o carnes al horno.

Galletitas de miel.

INGREDIENTES:

4 cucharadas de miel, 4 cucharadas de azucar molida, 2 cucharadas de cacao dulce, 100 grs. de manteca, 1 huevo, 300 grs. de harina, 1 1/2 cucharadita de esencia de vainilla.

PREPARACION:

Poner en una cacerolita la miel, el azúcar, el cacao y la manteca.

Colocar el recipiente sobre fuego moderado, revolviendo con cuchara de madera hasta que todos los ingredientes estén disueltos. Agregar la esencia.

Enfriar, revolviendo a ratos, y luego agregar a la preparación el huevo ligeramente batido y, por último, la harina, mezclando muy bien hasta lograr un bollo de masa.

Poner la masa sobre la mesa enharinada y estirarla con el palote hasta dejarla de un grosor de 1/2 centímetro aproximadamente.

Cortar las galletitas con cortante de la forma que se desee y colocarlas sobre placas enmantecadas.

Cocinar las galletitas en horno moderado hasta que estén nuevamente doradas. Guardarlas frias en frascos o latas bien cerrados. Se mantienen frescas durante mucho tiempo.

EL PROFESIONAL LOS RECETA
BARTAMIAN LOS DISEÑA
SU HIJO LOS PREFIERE
LINEA PIE/RECTOR
DE ORTOPEDIA
BARTAMIAN



CALZADO CORRECTIVO A PRUEBA DE CHICOS: CALIDAD Y DISEÑO

Calzado Correctivo

Calzado Deportivo

PLANTILLAS CORRECTORAS

Ortopedia Bartamian también las pone a sus pies

ARTICULOS DE ORTOPEDIA EN GENERAL

Descuentos desde el 30% a Obras Sociales.
Consulte con su Obra Social sobre otros beneficios.

ORTOPEDIA DB
Bartamian
Av. Belgrano 1699 TE. 45-5213 Bs. As.
Av. 7 Nº 1134 TE. 3-4935 La Plata

VENDEDOR/A COMPETENTE
en Lencería y Medias
Presentarse de 8 a 18,30 hs.
Larrea 331 - Buenos Aires

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2º Piso - Of. "K"
T.E.: 322-2768

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL
TEKEYAN

Redacción y Administración
Cnel. Niceto Vega 4779
1414 - CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: Lun. a Vier.
de 10.00 a 19.00 hs.

Registro Nac. de la
Propiedad Intelectual
Nº 78.836
Director
MIHRAN SARAFIAN
Corresponsalía, receptoría de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 - San Pablo
T.E.: 813-6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E.: 70-31 Montevideo